ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-10/9-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 15.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Նաիրի Թորոսյան» Ա/Ձ-ն, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **26.12.2019թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-10/9-3** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 15,268,492 (տասնհինգ միլիոն երկու հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան **10.12.2020թ.**:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Նաիրի Թորոսյան
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	Ք. Երևան, Ներքին Շենգավիթ 2փող. 35 տուն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510003068610100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 35015341
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ն. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/9-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Ընդհանուր քանակ	Մատակարարումը՝ 2020թ (ըստ համապատասխան եռամսյակների)		Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/
				2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ		
6.	ներկ-էմալ, գույնը՝ սպիտակ (Ներկ սպիտակ)	կգ	9000	4500	4500	830	7,470,000
7.	ներկ-էմալ, գույնը՝ շականակագույն (Ներկ հատակի)	կգ	5000	3750	1250	735	3,675,000
8.	ներկ-էմալ, գույնը՝ սև (Ներկ սև)	կգ	1000	750	250	699	699,000
9.	յուղաներկ (Ներկ կապույտ)	կգ	500	425	75	837	418,500
12.	յուղաներկ (Ներկ տարբեր գույների)	կգ	1800	1800		744.44	1,339,992
13.	յուղաներկ (Ներկ տարբեր գույների)	կգ	2000	1500	500	833	1,666,000
Ընդամենը							15,268,492

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Նաիրի Թորոսյան

Ն. Թորոսյան

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/9-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին/դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝								
				Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.
6.	ներկ-էմալ, գույնը՝ սպիտակ (Ներկ սպիտակ)	44111445/503	7,470,000	3,735,000	3,735,000	3,735,000	7,470,000	7,470,000	7,470,000	7,470,000	7,470,000	7,470,000
7.	ներկ-էմալ, գույնը՝ շականակագույն (Ներկ հատակի)	44111443/503	3,675,000	2,756,250	2,756,250	2,756,250	3,675,000	3,675,000	3,675,000	3,675,000	3,675,000	3,675,000
8.	ներկ-էմալ, գույնը՝ սև (Ներկ սև)	44111440/503	699,000	524,250	524,250	524,250	699,000	699,000	699,000	699,000	699,000	699,000
9.	յուղաներկ (Ներկ կապույտ)	44111413/509	418,500	355,725	355,725	355,725	418,500	418,500	418,500	418,500	418,500	418,500
12.	յուղաներկ (Ներկ տարբեր գույների)	44111413/508	1,339,992	1,339,992	1,339,992	1,339,992	1,339,992	1,339,992	1,339,992	1,339,992	1,339,992	1,339,992
13.	յուղաներկ (Ներկ տարբեր գույների)	44111413/511	1,666,000	1,249,500	1,249,500	1,249,500	1,666,000	1,666,000	1,666,000	1,666,000	1,666,000	1,666,000
Ընդամենը												15,268,492

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Նաիրի Թորոսյան

Ն. Թորոսյան